ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 մարտի 2021 թվականի N15-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 29-ի արտահերթ (4) նիստի օրակարգը, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ *Կողմ (5)* *Դեմ(0)* *Ձեռնպահ(0)*

1. Աբրահամյան Պ.
2. Ախտոյան Դ.
3. Մարտիրոսյան Վ.
4. Շամբարյան Հ.
5. Տոնոյան Ա.

Համայնքի ղեկավար՝ ***Լ. Գրիգորյան***

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մերձավան
համայնքի ավագանու 2021 թվականի
մարտի 29-ի N15-Ա որոշման

ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ (4) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ

15. ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

16. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(զեկ.ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1139 Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնք,
Երևանյան խճուղի 2-րդ փողոց թիվ 1 հեռ.(096)110044, merdzavan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 մարտի 2021 թվականի N16-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱԿՏՈՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Սրբուհի Համլետի Մարությանը, հանդիսանալով հանգուցյալ Գեղամ Գուրգենի Միքայելյանի իրավահաջորդը /հիմք Ըստ օրենքի ժառանգության վկայագիր Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ 07/10/2019, սեղանամատյան թիվ 2165/, 2021 թվականի մարտի 4-ին դիմել է Մերձավանի համայնքապետարան իր կողմից վարձակալած համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 29,2306 հա 4-րդ կարգի վարելահողից առանձնացված 5,0 հա վարելահողի /կադաստրային ծածկագիր 04-065-0503-0215/ գնման խդրանքով:

Գեղամ Գուրգենի Միքայելյանի հետ 2002 թվականի մայիսի 16-ին կնքվել է համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության 222,98 հա հողակտորի Վարձակալության պայմանագիր /վավերացված 16.05.2002 թվականին Էջմիածնի պետական նոտարական գրասենյակի կողմից, սեղանամատյան թիվ 1-2154/, 2012 թվականի սեպտեմբերի 18-ին կնքվել է Համաձայնագիր պայմանագրի 4.6 կետում լրացում կատարելու մասին /լրացում՝ Նախապատվության իրավունքով հողամասի օտարման դեպքում՝ այն ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու մասին/ վավերացված Վաղարշապատ տարածքի նոտարական գրասենյակի կողմից՝ սեղանամատյան թիվ 4994: 2019 թվականին տվյալ հողակտորի չափագրումից հետո այն մասնատվել է առանձին հողակտորների, որից հետո 2019 թվականի դեկտեմբերի 18-ին կնքվել է Համաձայնագիր՝ պայմանագրում փոփոխություններ մտցնելու մասին, վավերացված <<Արմավիրի մարզ>> տարածքի նոտարական գրասենյակի կողմից՝ սեղանամատյան թիվ 12900:

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի դրույթներով, հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի

Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով գնելու նախապատվության իրավունքը և հաշվի առնելով քաղաքացի Սրբուհի Համլետի Մարությանի դիմումը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 5,0 հա 4-րդ կարգի վարելահողը /կադաստրային ծածկագիր 04-065-0503-0215/ հողամասի վարձակալ Սրբուհի Համլետի Մարությանին օտարել ուղղակի վաճառքով կադաստրային արժեքով, որը կազմում է 5 925 000 /հինգ միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ *Կողմ (5)* *Դեմ(0)* *Ձեռնպահ(0)*

1. Աբրահամյան Պ.
2. Ախտոյան Դ.
3. Մարտիրոսյան Վ.
4. Շամբարյան Հ.
5. Տոնոյան Ա.

Համայնքի ղեկավար՝ ***Լ. Գրիգորյան***